

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության  
ինստիտուտի առաջատար գիտաշխատող, տ.գ.թ.

## ՄՏՎԵՐԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԾԱՎԱԼՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՀԱՏՈՒԿ ՏՆՏԵՍԱԻՐԱՎԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ստվերային տնտեսության բաղկացուցիչ և բովանդակային առումով ամենաեական մասերից մեկը տնտեսական հանցագործությունների և դրանց արդյունքում ստացված եկամուտների օրինականացման (փողերի լվացման) գործընթացներն են, որոնց բացահայտման և ապացուցման նպատակով հիմնականում օգտագործվում են ստվերային տնտեսության ծավալների որոշման հատուկ տնտեսաիրավական մեթոդները: Կապված տնտեսական հանցավորության թաքնված բնույթի և ոչ ակնհայտ լինելու հանգամանքի հետ «ստանդարտ» չափորոշիչների հիման վրա հանցավոր ճանապարհներով ստացված եկամուտներին և տնտեսական հանցագործություններին լիարժեք գնահատական տալը բավականին բարդ խնդիր է դառնում՝ հիմքում ունենալով երկու հիմնական առանձնահատկություն: Նախ և առաջ, այդ երևույթներին գտնե համարժեք գնահատական տալը հնարավոր է դառնում միայն այդ հանցագործությունների բացահայտման, հետաքննության և քրեական կամ քաղաքացիական դատավարության ընթացքում դրանց ապացուցման գործընթացում, և երկրորդ՝ դրանց բացահայտման և գնահատման համար անհրաժեշտ և նպատակահարմար է լինում հենց տնտեսաիրավական վերլուծության հատուկ մեթոդների կիրառումը, քանի որ այդ մեթոդներն են առաջին հերթին հնարավորություն տալիս արդյունավետ օգտագործել ու կիրառել տնտեսագիտական և հաշվապահական գիտելիքներն իրավաբանության պրակտիկայում:

Նպատակից կախված, առանձնացվում են տնտեսաիրավական վերլուծության երեք հիմնական ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը հիմնվում է մեթոդների որոշակի համակարգի վրա, մասնավորապես՝ *օպերատիվ տնտեսագիտական վերլուծությունն* իրականացվում է ոչ թափանցիկ ձևով՝ թաքցված հանցագործությունների բացահայտման նպատակով. *տնտեսաքրեագիտական* ուղղության հիմնական նպատակը հանցագործության հետքերի բացահայտումն է, իսկ *տնտեսաքրեաբանական* ուղղությունը՝ նպատակ ունի բացահայտել հանցագործության կատարմանը նպաստող պատճառները, հանգամանքները և պայմանները:

Հաշվի առնելով այս հիմնական ուղղությունների բնույթը և առանձնահատկությունները, տնտեսաիրավական վերլուծության կոնկրետ մեթոդները կարելի է խմբավորել հետևյալ կատեգորիաների մեջ.

- հաշվապահական վերլուծության մեթոդ,
- փաստաթղթային վերլուծության մեթոդ,
- տնտեսագիտական վերլուծության մեթոդ:

Հաշվապահական վերլուծության մեթոդը հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերի (հաշվեկշիռների, հաշիվների և երկակի գրանցումների, գնահատման և կալկուլյացիայի, գույքագրման ու փաստաթղթավորման և այլնի) գծով վերահսկողական ֆունկցիաների համակարգային հետազոտություն է՝ տնտեսական բնականոն գործունեությունից հաշվառման անհամապատասխանությունների և շեղումների բացահայտման նպատակով:

Տնտեսական նորմալ գործունեությունից հաշվառման անհամապատասխանություններն արտահայտվում են՝

- հաշվապահական հաշվառման մեթոդի տարրերի (հաշվեկշիռ ու հաշիվներ, կալկուլյացիա ու հաշիվներ և այլն) միջև փոխադարձ կապերի խախտումներում (խզումներում),
- հաշվապահական հաշվառման մեթոդի որևէ տարրի կտրվածքով (վերլուծական ու սինթետիկ հաշվառման միջև, սկզբնական ու ամփոփ փաստաթղթերի միջև և այլն) տնտեսական գործունեության արտացոլման սովորական կարգից շեղումներում,
- հաշվառման աշխատանքների տեխնոլոգիական գործընթացի խախտումներում (հաշվառման գրանցումների թվաքանակ ճշգրտումներ, հաշվառման, գույքագրման կանոնների խախտումներ և այլն):

Փաստաթղթային վերլուծության մեթոդը կարող է ներկայացվել որպես տնտեսական գործունեության «արտաքին ձևավորման» առանձնահատկություններում կամ հաշվառման փաստաթղթերի բովանդակության մեջ արտացոլվող ու հաշվապահական փաստաթղթերի ձևավորման գործընթացը բնութագրող փաստացի հանգամանքների ռետրոսպեկտիվ (հետահայաց կամ հետընթաց) հետազոտություն: Դրա հիմնական նպատակը տնտեսական գործունեության ապակառուցողական (դեստրուկտիվ) գործոնների բացահայտումն է, որոնք «արտացոլվում» են հատուկ փաստաթղթային անհամապատասխանությունների տեսքով: Դրանցից են՝

- հակասությունները առանձին փաստաթղթի բովանդակության մեջ,
- հակասությունները նույն կամ փոխկապակցված գործառնություններն արտացոլող հաշվառման փաստաթղթերի բովանդակության մեջ հակասությունները,
- հակասությունները միատարր գործառնություններն արտացոլող հաշվառման փաստաթղթերի բովանդակության մեջ և այլն:

Նշված անհամապատասխանություններից յուրաքանչյուր տեսակի բացահայտման համար օգտագործվում են փաստացի (փաստաթղթային) տվյալների հետազոտության եղանակների կամ ձևերի կոնկրետ խմբեր, որոնք օգնում են բացահայտել հանցագործությունը: Մասնավորապես, առանձին փաստաթղթի հետազոտման եղանակներից են՝

- ֆորմալ ստուգումը կամ արտաքին դիտարկումը, որը ներառում է փաստաթղթի՝ սահմանված ձևի պահպանման վերլուծությունը և դրա ռեկվիզիտների դետալային ուսումնասիրությունը,
- նորմատիվային ստուգումը, որը փաստաթղթում արտացոլված գործառնության բովանդակության հետազոտությունն է՝ գործող նորմերին, կանոններին և մեթոդական ցուցումներին դրա համապատասխանության տեսանկյունից,
- թվաքանական ստուգումը, որի էությունը հաշվապահական կոնկրետ փաստաթղթի կազմման ժամանակ կատարված տարբեր հաշվարկների ճշգրտության պարզաբանումն է և այլն:

Նշված մեթոդները, տարբերություններից զատ, ունեն նաև որոշակի ընդհանրություններ, մասնավորապես՝ ստուգումների (ռեկվիզիտ) իրականացման դեպքում դրանք բոլորն էլ ապահովում են բավականին բարձր արդյունավետություն և հնարավորություն են տալիս բացահայտելու կասկածելի փաստաթղթերը, որոնք էլ հետագայում ենթարկվում են ավելի խորը և մանրակրկիտ հետազոտման, թույլ են տալիս ձեռք բերել ապացուցողական նշանակություն ունեցող փաստեր և այլն: Իսկ ինչ վերաբերում է փոխադարձ կապված փաստաթղթերի համակարգում անհամապատասխանությունների բացահայտման մեթոդներին, ապա դրանց թվին են դասվում հիմնականում հանդիպակաց ստուգումները և փոխադարձ վերահսկողությունը:

Հանդիպակաց ստուգումը միևնույն փաստաթղթի տարբեր օրինակների համադրումն է, քանի որ սկզբնական հաշվառման ճիշտ կազմակերպման դեպքում շատ փաստաթղթեր կազմվում են երկու և ավելի օրինակներից: Նպատակային նշանակությունից կախված՝ նույն փաստաթղթի տարբեր օրինակները կարող են գտնվել ձեռնարկության տարբեր ստորաբաժանումներում, միևնույն իրավաբանական անձին պատկանող տարբեր կազմակերպություններում կամ առանձին քաղաքացիների ձեռքում, փոխադարձ կապված տարբեր կազմակերպություն-

ներում և այլն: Տնտեսական հանցագործության տեղի ունենալու դեպքում այս փախստարձ կապերը խախտվում են, ինչն էլ բացահայտվում է հանդիպակաց ստուգումների մեթոդով, կամ արտաքին տնտեսական գործունեության ոլորտում, օրինակ, տվյալ մեթոդը կարող է կիրառվել տարբեր երկրների մաքսային մարմիններում հայտարարագրված պայմանագրային գների համադրման ճանապարհով և այլն: Նշենք նաև, որ հանդիպակաց ստուգումներն իրականացվում են ինչպես հանցագործության բացահայտման, այնպես էլ դրա ապացուցման դեպքերում:

Ի տարբերություն հանդիպակաց ստուգումների՝ փոխադարձ վերահսկողության էությունը մի քանի տարբեր փաստաթղթերի համադրումն է, որոնք ուղղակի կամ անուղղակի արտացոլում են ստուգվող տնտեսական գործառնությունը: Ուստի, տվյալ մեթոդը կարող է օգտագործվել նաև այն փաստաթղթերի ստուգման նպատակով, որոնք կազմվում են մեկ օրինակից և չեն կարող ենթարկվել հանդիպակաց ստուգման: Այս առումով համադրման կարող են ենթարկվել մեկ կամ մի քանի ձեռնարկությունների հաշվապահական փաստաթղթերը, այլ ձեռնարկություններում պահպանվող հաշվապահական և այլ (ոչ հաշվապահական) փաստաթղթերը, հաշվապահական փաստաթղթերը և «սև» (ոչ պաշտոնական) հաշվառման տվյալները և այլն: Փոխադարձ վերահսկողության մեթոդը կիրառվում է հիմնականում կեղծիքների, ինչպես նաև տնտեսական հանցագործությանը մասնակցած անձանց բացահայտման նպատակով:

Տնտեսական գործունեության մի շարք շեղումներ կարելի է բացահայտել հաշվառման այն տվյալների ուսումնասիրության միջոցով, որոնք արտացոլում են միատարր արժեքների (ակտիվների) շարժը: Դա կարելի է կատարել ըստ փաստաթղթերի հաշվառման տվյալների վերականգնման, ապրանքանյութական արժեքների և դրամական միջոցների օրական շարժի վերլուծության և նույնատիպ գործառնություններն արտացոլող փաստաթղթերի համեմատական վերլուծության միջոցով:

Հաշվապահական հաշվառման մեթոդների օգտագործման հետ կապված տնտեսական հանցագործությունների բացահայտման արդյունավետության բարձրացմանը նպաստում են այն գործոնների հաշվի առնելը, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման խեղաթյուրման ռիսկի մեծացման վրա: Այս առումով համեմատաբար էական գործոններն ամրագրված են աուդիտորական գործունեության ստանդարտում՝ կապված աուդիտորի այն գործողության հետ, որը վերաբերում է հաշվապահական հաշվառման խեղաթյուրումների բացահայտմանը, ինչն էլ կազմվում է «Միսալներ և խարդախություն» (ISA «Fraud and Error») Միջազգային աուդիտորական ստանդարտի հիման վրա: Մասնավորապես, տնտեսվարող սուբյեկտի ներտնտեսական գործունեության գործոններից (որոնք նպաստում են խեղաթյուրումների առաջացմանը) են՝

- տնտեսության ճգնաժամային ճյուղերում զգալի ֆինանսական ներդրումների առկայությունը,
- տնտեսական սուբյեկտի շրջանառու միջոցների մեծության հետ իրացման (արտադրության) ծավալների արագ աճի՝ անհամապատասխանությունը կամ էլ շահույթի զգալի նվազումը,
- որոշակի ժամանակահատվածում մեկ կամ փոքրաթիվ պատվիրատուներից կամ մատակարարներից տնտեսվարող սուբյեկտի կախվածության առկայությունը,
- պայմանագրային հարաբերությունների կամ հաշվառման պրակտիկայում փոփոխությունները, որոնք հանգեցնում են շահույթի մեծության զգալի փոփոխություններին,
- տնտեսվարող սուբյեկտի համար ոչ տիպիկ գործարքների կնքումը՝ հատկապես տարվա վերջին, և որոնք զգալիորեն ազդում են ձեռնարկության ֆինանսական ցուցանիշների վրա,
- կատարված այնպիսի վճարումների առկայությունը, որոնք ակնհայտորեն չեն համապատասխանում մատուցված ծառայություններին կամ մատակարարված ապրանքների քանակին ու արժեքին,

- տնտեսվարող սուբյեկտի կազմակերպական-կառավարչական կառուցվածքի առանձնահատկությունները և դրանում առկա թերությունները,
- կապիտալի և շահույթի բաշխման կառուցվածքների առանձնահատկությունները,
- սահմանված կանոններից հաշվապահական հաշվառման և հաշվապահական հաշվետվության նախապատրաստման շեղումների առկայությունը և այլն:

Հարկ է նշել, որ տվյալ տնտեսման տրամաբանությունը կիրառելի է մաև առանձին վերցրած տնտեսության ճյուղերի և ամբողջ երկրի մասշտաբով: Մասնավորապես, այն գործոնների թվին, որոնք արտացոլում են կոնկրետ ճյուղի տնտեսվարող սուբյեկտի ֆինանսատնտեսական գործունեության և ընդհանուր առմամբ երկրի ողջ տնտեսության առանձնահատկությունները, և որոնք նպաստում են խեղաթյուրումների առաջացմանը, կարելի է վերագրել՝

- տնտեսության ճյուղի և ընդհանուր առմամբ երկրի ողջ տնտեսության վիճակը՝ ճգնաժամ, լճացում, վերելք և այլն,
- ճյուղի ճգնաժամային վիճակի հետ կապված տնտեսվարող սուբյեկտի անվճարունակության (սնանկացման) ի հայտ գալու հնարավորության մեծացումը,
- տնտեսվարող սուբյեկտի արտադրական գործունեության կամ արտադրության տեխնոլոգիական առանձնահատկությունները և այլն:

*Տնտեսագիտական վերլուծության մեթոդը* հիմնված է տնտեսագիտական տարբեր ցուցանիշների փոխադարձ կապերի և փոխապայմանավորվածության գործոնները հաշվի առնելու վրա, որոնք տնտեսական բնականոն գործունեության պայմաններում, փոխադարձաբար կապված են: Որպես կանոն, այս ցուցանիշների փոխադարձ կապերը լավ ուսումնասիրված բնութագրիչներ են և պայմանավորված են տնտեսական գործընթացների փոխգործողությամբ: Տնտեսական հանցագործությունների կատարման դեպքում նշված ցուցանիշների փոխադարձ կապերը և փոխապայմանավորվածությունները խախտվում են և այդ անհամապատասխանությունները բավականին բնութագրական են դառնում հանցագործությունների ապացուցման համար, քանի որ տնտեսագիտական վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել նորմալ տնտեսական գործունեությունից շեղումների բուն պատճառները:

Գոյություն ունեն տնտեսական հանցագործությունների բացահայտման նպատակով օգտագործվող տնտեսագիտական ցուցանիշների անհամապատասխանության բացահայտման հետևյալ մեթոդները.

- ա) զուգակցված ցուցանիշների համադրման մեթոդ,
- բ) ձեռնարկության գործունեության ներքին համադրելիության վերլուծության մեթոդ,
- գ) շրջանառության ստուգման մեթոդ,
- դ) հատուկ հաշվարկային ցուցանիշների մեթոդ,
- ե) ստերեոտիպերի մեթոդ,
- զ) ճշգրտող ցուցանիշների մեթոդ:

*Չուգակցված ցուցանիշների համադրման մեթոդի* օգտագործման նախադրյալն այն հիպոթեզն է, ըստ որի հանցագործության (ստվերային գործունեության) և ձեռնարկության տնտեսական բարդ համակարգում տեղի ունեցող նյութական միջոցների շարժի և արտադրական գործընթացների փոխադրեցության պարագայում զուգակցված ցուցանիշների միջև փոխադարձ կապերի խախտումներն անխուսափելի են: Մեթոդը ներառում է տնտեսական գործունեության այս կամ այն կողմը բնութագրող ցուցանիշների ընտրությունը, հաշվետու մի քանի ժամանակահատվածների համար զուգակցված ցուցանիշների խմբավորումները, դիմամիկ շարքերի գրաֆիկների կառուցումը, ինչպես մաև դրանց վերլուծության ընթացքում հակասությունների բացահայտումը: Մասնավորապես, նմանատիպ հակասություններ կարող են բացահայտվել զուգակցված հետևյալ ցուցանիշների միջև.

- տեխնոլոգիական կարիքների համար էլեկտրաէներգիայի սպառումը և արտադրանքի թողարկումը,
- շահույթի մեծությունը և արտադրանքի թողարկումը,
- հումքի օգտագործումը, արտադրանքի թողարկումը և բազմաթիվ այլ զուգակցումներ:

Տվյալ մեթոդի օգտագործման դեպքում ելակետային է ձեռնարկության տնտեսական համակարգի մասին ամբողջական պատկերացումը, և դրա հիման վրա փնտրվում է տնտեսական ցանկացած անհամապատասխանություն: Նշենք նաև, որ այս մեթոդի կոնկրետ ռազմավարությունները և մեթոդիկաները կարող են էականորեն իրարից տարբերվել՝ կախված բացահայտվող իրավախախտումների տիպից, իսկ ընդհանուր առմամբ այս գաղափարի օգտագործման հիման վրա համաշխարհային պրակտիկայում մշակվել են մի շարք կոնկրետ մեթոդներ, որոնք ապացուցել են իրենց արդյունավետությունը՝ հարկումից եկամուտները թաքցնելու և փողերի վացման դեպքերի բացահայտման ժամանակ:

*Ձեռնարկության գործունեության ներքին համադրելիության վերլուծության մեթոդի* օգտագործման դեպքում համադրվում են մի շարք ժամանակահատվածների համար ձեռնարկության գործունեության համեմատելի ցուցանիշները: Տվյալ մեթոդը նույնպես բավականին արդյունավետ է թաքցված եկամուտների և փողերի վացման դեպքերի բացահայտման առումով, քեև դրա պատշաճ օգտագործումը ենթադրում է երկարաժամկետ հատվածում ձեռնարկության տնտեսական գործունեության պայմանների հարաբերական կայունություն, ինչն էլ միշտ չէ, որ պահպանվում է:

Ներքին համեմատական վերլուծության բուն իմաստն այն է, որ բացահայտվում են ժամանակի համեմատելի հատվածներում շահույթի մեծության շեղումները, որոնք, օրինակ, կարող են բացատրվել տնտեսական շրջանառության կամ ծախսերի փոփոխություններով (իրացման կամ ձեռքբերման գների փոփոխություններ, վաճառքի ժամկետների հետաձգումներ և այլն): Այս առումով ընդունված է համարել, որ եթե հնարավոր չէ գտնել վստահություններչնող (հիմնավոր) բացատրություններ, ապա դա կարող է վկայել տնտեսական շրջանառության, ծախսերի կառուցվածքի խախտման մասին և կապված լինել հարկումից եկամուտների թաքցնելու հետ:

*Շրջանառության ստուգման մեթոդը* (կամ ինչպես այլ կերպ անվանում են՝ ստուգիչ կալկուլյացիան) իրականացվում է հարկատու անձի հաշվարկային փաստաթղթերի հիման վրա, այն հաշվով, քե շրջանառության ինչ ծավալներ են ձեռք բերվել և ըստ այդմ եզրահանգում է կատարվում ստացված եկամուտների մասին: Ընդ որում, ստուգողը կարող է հիմնվել ինչպես հարկատուի տվյալների վրա, այնպես էլ տեղեկատվություն ստանալ սեփական կամ այլ աղբյուրներից: Ստուգիչ կալկուլյացիան կարող է ապացույցներ տալ այն մասին, որ ֆորմալ առումով հաշվառման ճիշտ արդյունքները փաստացի չեն համապատասխանում իրականությանը, որն էլ կարող է հիմք հանդիսանալ թաքցված եկամուտների կամ փողերի վացման դեպքերի հայտնաբերման նպատակով ստուգումները շարունակելու համար: Նշենք նաև, որ շրջանառության կոնկրետ չափանիշերը տնտեսության տարբեր ճյուղերում էականորեն տարբերվում են իրարից, ուստի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ընտրել տվյալ ճյուղին բնորոշ շրջանառության չափանիշեր՝ հիմնավորելով այդ ընտրությունը:

Այս մեթոդի կիրառման մեկ այլ մոտեցմամբ ընտրվում են այնպիսի ցուցանիշներ, որոնց փոփոխությունների դինամիկայում, տնտեսական գործունեության նորմալ ընթացքի ապահովման դեպքում փոխադարձ կախվածություն չպետք է լինի, իսկ նման կախվածության հայտնաբերումն էլ վկայում է խախտումների և չարաշահումների առկայության մասին:

*Հատուկ հաշվարկային ցուցանիշների մեթոդի* շրջանակներում օգտագործվում են հատուկ հաշվարկային (կամ վերլուծական) ցուցանիշներ, որոնք հայտնաբերվել են հաշվետու տվյալների կամ տեղեկատվության այլ աղբյուրների հիման վրա՝ հանցագործությունների հետ

կապված գործոնների աղդեցությունը նվազեցնելու կամ բացառելու նպատակով: Տվյալ մեթոդի կիրառումը հիմնված է հետևյալ կանխադրությունների վրա. նախ և առաջ՝ առկա է հնարավորություն այնպիսի ցուցանիշի առանձնացման համար, որն անպայման կփոփոխվի հանցագործության ազդեցության տակ, և երկրորդ՝ հնարավոր է հաշվարկել այդ ցուցանիշի մեծությունը նորմալ աշխատող ձեռնարկության պայմանների համար, որն էլ հենց ստացել է «հատուկ հաշվարկային» անվանումը: Հատուկ հաշվարկային ցուցանիշի փաստացի և «էտալոնային» մեծությունների միջև տարբերության (խզման) առկայությունը կարող է կապվել հանցագործության փաստի առկայության հետ, որն էլ տվյալ մեթոդի հիմնական գաղափարն է և օգտագործվում է թաքցված եկամուտների հայտնաբերման ու «կեղտոտ փողերի» լվացման դեպքերի բացահայտման այլ կոնկրետ մեթոդների համատեքստում, որոնք կարելի է համարել տվյալ մեթոդի տարատեսակները: Մասնավորապես, դրանք թվին կարելի է դասել համեմատաբար հաճախ կիրառվող *նույնատիպ ձեռնարկությունների արտաքին համեմատական վերլուծության մեթոդը*, համաձայն որի ձեռնարկությունների արտաքին համադրման դեպքում ստուգվող ձեռնարկության որոշիչ ցուցանիշները համեմատվում են համապատասխան ճյուղի նույն ցուցանիշների, ինչպես նաև մեծությամբ և չափերով նույնաման ձեռնարկությունների (անալոգների) հետ: Այդ համեմատությունը կարող է իրականացվել ինչպես առանձին ձեռնարկությունների, այնպես էլ առանձին ցուցանիշների (թվերի) համեմատության տեսքով, իսկ որպես հիմնական ցուցանիշներ, ըստ որոնց կատարվում են համեմատությունները, օգտագործվում են տնտեսական շրջանառության, հաշվեկշռային և գուտ շահույթի ցուցանիշները:

Առանձին ձեռնարկությունների համադրությունը սահմանափակվում է եկամուտների և ծախսերի, ինչպես նաև ստուգվող ձեռնարկության հատուկ տնտեսական ցուցանիշներն առանձին համեմատվող ձեռնարկության նույնաման ցուցանիշների հետ համեմատությամբ, իսկ ստուգիչ թվերի համեմատությունն օգտագործվում է ձեռնարկությունների շրջանառության ծավալների և շահույթի ստուգման նպատակով, ինչպես նաև այլ փաստաթղթերի բացակայության պայմաններում՝ այդ ցուցանիշներին գնահատական տալու անհրաժեշտության դեպքում:

Առանձին կատեգորիայի ձեռնարկությունների համար նորմատիվները սահմանվում են բազմաթիվ ձեռնարկությունների գործունեության արդյունքների հիման վրա, որոնք իրենց տեսակով և մեծությամբ համապատասխանում են այն ձեռնարկություններին, որոնց նկատմամբ դրանք պետք է կիրառվեն: Այն երկրներում, որտեղ կիրառվում է այս մեթոդը, ստուգիչ թվերը կամ տիպային նորմատիվները, որոնք բխում են ստանդարտ (էտալոնային) ձեռնարկության պայմաններից և հաշվի են առնում տարբեր պայմաններ, յուրաքանչյուր տարի հրապարակվում են հատուկ ժողովածուի տեսքով: Օրինակ, միջին նորման նույն կատեգորիայի ստուգված ձեռնարկությունների առանձին ցուցանիշների միջին կշռված ցուցանիշն է, որի առկայությունը թույլ է տալիս կատարել անհրաժեշտ համեմատություններ՝ միջին հաշվով կամ ընդհանրական պատկերացում կազմելու համար: Օրինակ, եթե համապատասխան տարվա նորմատիվների ժողովածուն որոշակի ճյուղի համար (որտեղ, օրինակ, կան երեք ձեռնարկություններ) ամրագրել է համախառն շահույթի 35%-38%-41% ցուցանիշ, իսկ ստուգվող ձեռնարկության համախառն շահույթը կազմել է 20%, ապա ստուգող մարմինները հետազոտում են այդ շեղման պատճառները և հարկային իրավախախտումների առկայությունը: Նմանապես, օրինակ, Գերմանիայի վիճակագրական ֆեդերալ գերատեսչությունը յուրաքանչյուր եռամսյակ կամավոր և ներկայացուցչական բազայի հիման վրա իրականացնում է վիճակագրական հաշվարկներ՝ կապված բնակչության տարբեր խմբերի, այդ թվում՝ նաև ազատ մասնագիտությունների տեր անձանց ծախսերի կառուցվածքի հետ, ինչն օգտագործվում է որպես ստուգիչ թվեր՝ տնտեսվարող սուբյեկտների գործունեության ստուգման դեպքում:

*Ստերեոտիպերի (կամ «շարժումների») մեթոդը:* Տվյալ մեթոդը հիմնված է տնտեսական ցուցանիշներում արտացոլում գտած անտրամաբանական կապերի բացահայտման վրա, որոնք

արտացոլում են հանցագործության որոշակի ձևի (կամ միջոցի, եղանակի) առանձնահատկությունները և կոչվում են «ստերեոտիպեր» (կամ «շաբլոններ»)։ Այս մեթոդը հանգում է նշված կապերի օգտագործմանն ինչպես հանցագործության նախանշանների (բնութագրերի) նախնական որոնման, այնպես էլ քրեական գործի քննության դեպքում ապացույցների հավաքման համար։ Տվյալ գաղափարի հանրահայտ և լայնորեն տարածված կիրառության դեպքերից է այսպես կոչված «կարմիր դրոշակների» մեթոդը, այն է՝ հնարավոր խախտումների և չարաշահումների մասին վկայող նշանների՝ «կարմիր դրոշակների» ի հայտ գալը որպես ահազանգ ընդունելը։ Օրինակ, այնպիսի տնտեսական հանցագործության, ինչպիսին է կայտինգը (դրամարկղ չմուտքագրված գումարների դիմաց չեկերի դուրս գրումը), նշաններից է նույն անձի կամ ընկերության անունով չեկերի հաճախակի դուրս գրումը, նույն ժամանակահատվածում նույն անվան դիմաց տարբեր բանկերի հաշիվներից չեկերի դուրս գրումը, ավանդատուի կողմից իր հաշվեկշռի ստուգման նպատակով հաճախակի հարցումները և այլն։ Այս առումով, տնտեսական այլ հանցագործությունների «կարմիր դրոշակների» ցանկերը մշակվում և օգտագործվում են դրանց կոնկրետ տեսակների դիտարկման ժամանակ, ուստի այս մեթոդը ևս կիրառման յուրաքանչյուր դեպքի համար անխուսափելիորեն մոդիֆիկացվում է տարբեր ճյուղերի և ձեռնարկությունների ստվերային գործարքների բացահայտման նպատակով։

Տվյալ մեթոդի տարատեսակներից է *հակասությունների (տարբերությունների) մեթոդը*, որը հիմնված է տեղեկատվության երկու և ավելի աղբյուրների համեմատության վրա։ Սրա մոդիֆիկացիաները լայնորեն օգտագործվում են հարկումից թաքցվող եկամուտների և փողերի լվացման դեպքերի հայտնաբերման համար։ Դիտարկենք այս մեթոդի կիրառության հիմնական տարբերակները։

*Չուտ արժեքի վերլուծության մեթոդը*, որը մասնագիտական գրականության տարբեր աղբյուրներում կոչվում է նաև հիմնական (կամ զուտ) կապիտալի գնահատման մեթոդ, շատ արդյունավետ է հարկատուի ստվերային դրամական միջոցների և թաքցված եկամուտների բացահայտման համար։ Տվյալ մեթոդի առանձնահատկությունն այն է, որ թաքցված եկամուտների բացահայտման համար հաշվապահական հաշվառման իրականացման և շահույթի ծավալների որոշման անհրաժեշտություն չի առաջանում։ Դրա հիմքում ընկած է այն գաղափարը, որ որոշակի ժամանակահատվածում հարկատուի ունեցվածքի մեծացումը կարող է տեղի ունենալ միայն այն եկամուտների հաշվին, որոնք ենթակա են հարկման, հարկման ենթակա չեն և միանվագ դրամական մուտքեր են, եթե ունեցվածքի տնօրինման մասնավոր բնույթի ակտեր տեղի չեն ունեցել (նվիրատվություններ, կենսական պահանջմունքների բավարարում և այլն)։ Եթե հաշվարկների ընթացքում կբացահայտվի, որ ունեցվածքի հավելանք և անձնական սպառումը (հաշվի առած որոշակի ավելացումները և հատկացումները) գերազանցում են այն եկամուտների ծավալը, որի դիմաց վճարված են սահմանված բոլոր հարկերը, ապա դրանից հետևում է, որ ունեցվածքի հավելանք կամ դրա մի մասը չեն համապատասխանում հայտարարագրված եկամուտներին և այդ իսկ պատճառով կրում են անօրինական բնույթ։

Սպառողական ծախսերի մեծության փաստաթղթային ճշգրիտ որոշման անհնարինության դեպքում օգտագործվում է կենսապահովման նվազագույն մակարդակի և տնային տնտեսության վարման միջին ծախսերի մասին տեղեկատվությունը, որը զարգացած երկրներում պարբերաբար հրապարակվում է վիճակագրական մարմինների կողմից և հավաքագրվում է տնային տնտեսությունների կամավոր և ներկայացուցչական ընտրանքային հետազոտությունների միջոցով։ Այսինքն, այս մեթոդի շրջանակներում կիրառվում են նաև դրամաշրջանառության ցուցանիշներ, որոնք լայն հնարավորություններ են բացում այս մեթոդի տարատեսակների մշակման համար։ Մասնավորապես, դրամաշրջանառության ստուգման վրա հիմնված մեթոդների շարքում լայնորեն օգտագործվում են դրամարկղային դեֆիցիտի հաշվարկի, դրամաշրջանառության հաշվարկի և ծախսերի ծածկման հաշվարկի մեթոդները։

*Դրամարկդային դեֆիցիտի հաշվարկման մեթոդը* կարող է օգտագործվել փոքր և միջին ձեռնարկությունների ստուգման ժամանակ, որոնց դրամարկդերում մուտքագրվում են դրամարկդի գրքում հաշվառվող կանխիկ դրամական միջոցներ: Դրամարկդային դեֆիցիտի հաշվարկման հիմքն այն է, որ ձեռնարկության սեփականատերը չի կարող ավելի շատ դրամական միջոցներ ծախսել (բաց թողնել), որքան առկա է ձեռնարկության դրամարկդում: Եթե որոշակի ժամանակահատվածի համար ձեռնարկության ծախսերը գերազանցում են դրամարկդային սկզբնական կանխիկ դրամի ծավալների և մույն ժամանակահատվածում դրամական մուտքերի հանրագումարը, ապա դա վկայում է դրամարկդային դեֆիցիտի առկայության մասին, որի հետևանքն է ձեռնարկության ավելի հանգամանալի ստուգումը, իսկ դրամարկդային դեֆիցիտի արժանահավատ բացատրությունների բացակայությունը կարող է հիմք հանդիսանալ թաքցված եկամուտների վարկած առաջ քաշելու համար:

*Դրամաշրջանառության հաշվարկման մեթոդը* ունեցվածքի հավելածի հաշվարկման մեթոդի տարատեսակներից մեկն է և սահմանափակվում է միայն եկամուտների և ծախսերի վերլուծությամբ: Ինչպես հայտնի է, գոյություն ունի դրամաշրջանառության հաշվարկման երկու հիմնական տեսակ՝ ընդհանուր դրամաշրջանառության հաշվարկ, որը տարածվում է արտադրական և մասնավոր ոլորտների վրա (դրանց հանրագումարն է) և դրամաշրջանառության այնպիսի հաշվարկ, որի դեպքում հաշվի է առնվում միայն արտադրական կամ միայն մասնավոր ոլորտների դրամաշրջանառության ծավալները (դրամական մուտքերը և վճարումները): Այս մեթոդի հիմնական գաղափարն այն է, որ դիտարկվող ժամանակահատվածում հարկատուն չի կարող ծախսել կամ կուտակել ավելի շատ դրամական միջոցներ, որքան նա ունի որպես եկամուտներ բոլոր աղբյուրներից: Նշենք նաև, որ զարգացած շուկայական տնտեսություն ունեցող երկրներում ձեռնարկությունների (տնային տնտեսությունների) դրամաշրջանառության հաշվարկման կարգը մանրամասն կանոնակարգվում է նորմատիվ ակտերով կամ էլ դատական որոշումներով, ուստի այս գաղափարի վրա հիմնված մեթոդներն ունեն ունիվերսալ բնույթ և մոդիֆիկացիաների ենթարկման կարիք չեն զգում:

*Ծախսերի ծածկման հաշվարկի մեթոդի* օգտագործման դեպքում փաստացի կատարված դրամական վճարումները համադրվում են այն գումարների հետ, որոնք առկա են եղել ստուգվող սուբյեկտի մոտ, հետևաբար կարելի է ասել, որ այս մեթոդը դրամաշրջանառության հաշվարկման մեթոդի պարզեցված տարբերակն է: Ծախսերի ծածկման հաշվարկների ժամանակ հաշվի են առնվում նաև այն գումարները, որոնք հարկատուն ստանում է ոչ վարձու աշխատանքի պաշտոնական վայրից, ընդ որում՝ այս մեթոդը կարող է օգտագործվել նաև այն դեպքերում, երբ բացակայում է հարկատուի ունեցվածքային վիճակի մասին բավարար տեղեկատվություն, և ինչպես կարելի է նկատել, քննարկված մեթոդները հիմնված են վերլուծվող ցուցանիշների հաշվեկշռային փոխկապվածության սկզբունքի վրա:

*Ճշգրտող ցուցանիշների մեթոդ:* Տվյալ մեթոդի էությունը տնտեսական ցուցանիշների և տնտեսական գործունեության արտաքին այն միջավայրի գործոնների համադրման մեջ է, որում գործում է տվյալ ձեռնարկությունը: Որպես օրինակ կարելի է բերել որևէ կոնկրետ ձեռնարկության որևէ կոնկրետ ապրանքի իրացման դիմամիկայի համադրությունը տվյալ ապրանքային շուկայի կոնյունկտուրայի փոփոխությունների հետ, որի դեպքում պահանջվում է պարզել, օրինակ, նվազող պահանջարկի պայմաններում իրացման ծավալների զգալի ավելացման պատճառները: Բնականաբար, տվյալ մեթոդը կարող է օգտագործվել միջին զների և այն զների, սակագների համեմատության ժամանակ, որոնցով իրացվում են ապրանքները:

Քննարկված հատուկ տնտեսաիրավական մեթոդները ստվերային տնտեսական գործունեության բացահայտման մեթոդների համակարգի անհրաժեշտ, բայց ոչ բավարար տարրեր են, ուստի չի կարելի թերագնահատել տնտեսական հանցագործությունների բացահայտման և հետաքննության հատուկ կամ ավանդական մեթոդների նշանակությունը, որոնց հետազոտու-

թյունն իրականացվում է իրավագիտական հատուկ դիսցիպլինների շրջանակներում (քրեագիտություն, քրեաբանություն, օպերատիվ-հետախուզական գործունեություն, իրավաբանական հոգեբանություն և այլն): Հետևապես, որքան շատ մեթոդներ են կիրառվում ստվերային այս կամ այն գործարքի կամ տնտեսական հանցագործության բացահայտման ու ապացուցման նպատակով, այնքան հիմնավոր և անհերքելի են դառնում ձեռք բերված տվյալներն ու ապացույցները: Սա էլ նշանակում է, որ ստվերային տնտեսության բացահայտման և դրա ծավալների քանակական գնահատման մեթոդաբանությունը պետք է լինի հնարավորինս համալիր և ապահովի ոչ միայն ընդհանուր միտումի, օրինաչափության և գործընթացի, այլև դրա առանձին բաղադրիչների և առանձնահատկությունների վերհանումն ու հիմնավորումը:

## ԼԵՎՈՆ ԿԱԿՈՍՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ. Զոբանյանի անվան  
տնտեսագիտության ինստիտուտի ասպիրանտ*

### ՎԵՆՉՈՒՐԱՅԻՆ ԻՆՎԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՄԱԿԱՐԳԻ ԶԵՎԱՎՈՐՄԱՆ ԽՆԴՐԻ ՇՈՒՐՋ

Զսանմեկերորդ դարում մարդկության զարգացումն ապահովող կարևորագույն գործոններից մեկը նոր, ավելի արդյունավետ տեխնոլոգիաների կիրառումն է: Արևմտյան երկրների փորձը ցույց է տալիս, որ վենչուրային կապիտալի (վենչուրային ինդուստրիայի) ձևավորումը կարող է մեծապես նպաստել տնտեսության զարգացմանը: Այլ կերպ ասած ՀՀ-ում ձևավորվող նոր տնտեսական գործընթացին կարող է էապես օգնել վենչուրային համակարգի ստեղծումը:

Ստորև ներկայացնում ենք ՀՀ-ում նման համակարգի ձևավորմանն առնչվող հիմնախնդիրների շուրջ մեր նկատառումները:

ՀՀ-ում այդպիսի համակարգի ստեղծումը կապահանջի հանրապետության նախագահի հովանավորությամբ կազմակերպել խորհուրդ, որին պետք է ուղղված լինի այդ համակարգի գործունեությունն ապահովող նորմատիվային, կազմակերպական և տնտեսական խնդիրների լուծմանը:

Համակարգի ստեղծման միջոցով պետք է ապահովվի այնպիսի իրավական-նորմատիվային ակտերի ընդունում, որոնք կարողանան լիարժեք դարձնել վենչուրային-ներդրումային համակարգի գործունեությունը գիտատեխնիկական ոլորտում:

Այդ ուղղության ներդրման համար կպահանջվի.

- ստեղծել վենչուրային-ներդրումային հարաբերությունները կարգավորող նորմատիվային-իրավական հիմքեր,
- համակարգի ստեղծման համար պահանջվող ֆինանսական միջոցներն ապահովելու համար պետության օժանդակություն,
- օրենսդրական փոփոխություններ (մաքսային և հարկային ոլորտներում),
- պետության կողմից երաշխիքների տրամադրում:

Համակարգի արդյունավետ գործունեության համար անհրաժեշտ է զարգացած երկրորդային ֆոնդային շուկայի և վենչուրային ձեռնարկությունների արժեթղթերի առկայություն՝ համապատասխան էլեկտրոնային առևտրային համակարգերով, որոնց անհրաժեշտությունը ՀՀ-ում ժամանակի հրամայական պահանջն է: